

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ

ՎԻԼԻԿ ՍԻՐԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կյանքի 77-րդ տարում իր մահկանացուն կնքեց քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիլիկ Սիրակի Հարությունյանը:

Վիլիկ Սիրակի Հարությունյանը ծնվել է 1938 թ. դեկտեմբերի 5-ին Երևանում ծառայողի ընտանիքում: 1956 թ., ավարտելով Ստեփանավանի միջնակարգ դպրոցը, ընդունվել է Երևանի թեթև արդյունաբերության տեխնիկումը, որն ավարտել է 1959 թ. գերազանցության դիպլոմով՝ ստանալով բրդի արդյունաբերության մանվածքի տեխնոլոգիայի «տեխնիկ-մեխանիկ»-ի որակավորում: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը: 1964 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է այն և ընդունվել ԵՊՀ-ի ասպիրանտուրան՝ «օրգանական քիմիա» մասնագիտությամբ: 1969 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1988 թ.՝ դոկտորական թեզը և ստացել քիմիական գիտ. դոկտորի գիտական աստիճան: 1974 թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1991 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1966 թ-ից Վիլիկ Սիրակի Հարությունյանը անցել է մանկավարժական աշխատանքի օրգանական քիմիայի ամբիոնում: Սկզբում որպես ասիստենտ, հետո ավագ դասախոս, դոցենտ, 1989 թ-ից՝ պրոֆեսոր: 2000 թ-ից զբաղեցնում էր ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնը:

Մեծ է պրոֆ. Վ.Ս.Հարությունյանի գիտական վաստակը օրգանական քիմիայի բնագավառում: Գիտական գործունեության ոլորտը, որով զբաղվում էր նա, շատ ընդգրկուն էր՝ կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզը տարբեր փափկ կետոլակտոնների և կետոթթվների բազայի վրա: Մշակելով հիշյալ դասերի տարբեր ֆունկցիոնալ ածանցյալների ստացման մաթեմատիկական եղանակներ, ստեղծվել են տարբեր փափկ հազեցած լակտոնային օղակ պարունակող կամ էլ հարակից կառուցվածքով նոր հետերոցիկլիկ միացություններ: Կատարված հետազոտությունները համարվում են նոր ուղղություններ ինչպես լակտոնների քիմիայի, այնպես էլ հետերոցիկլիկ միացությունների քիմիայի բնագավառում:

Նրա կողմից ղեկավարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սինթեզված միացություններից շատերը օժտված են կենսաբանական ակտիվության

լայն շրջանակներով (հակաբորբոքային, հակացնցումային, հակաբակտերիալ, ցավազրկող, հակաուռուցքային, սպազմոլիտիկ, հանգստացնող, քնաբեր, հակամուրագեն, հիպերթենզիկ, հիպոթենզիկ, ածի խթանիչ և այլ հասկացություններով): Շարժմացություններ անցել են խորը ուսումնասիրման փորձաշրջան:

Վ. Ս. Նարությունյանը 250-ից ավել գիտական աշխատանքների հեղինակ է, որոնք հրապարակվել են հանրապետական և արտասահմանյան ամսագրերում: Նա ստացել է 85 ԽՍՀՄ հեղինակային վկայագրեր և ՆՏ արժանագրեր, իսկ գիտական գործունեության արդյունքները բազմիցս զեկուցվել են հանրապետական և միութենական փառեր գիտաժողովներում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են երկու թեկնածուական ատենախոսություն, 100-ից ավելի դիպլոմային աշխատանքներ և մագիստրոսական թեզեր: 60 անուն նոր նյութերի ստացման մեթոդներ ներդրված են Երևանի քիմիական ռեսպիլմների գործարանում: Դրանց թվում այնպիսի լայն կիրառություն ունեցող միացություններ, ինչպիսիք են ալկիլզիցլիլային եթերները, թիոզիկլոլաթթու, քլորալակված թիոմիզանյութերը, DL-Ֆենիլ-էթիլամինը, դիբենզոիլ-D-գինեթթուն և այլն: Որոշ միացություններ Ազովի ձկնափրկության գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ ներ են դրվել ավազանային ձկնարդյունաբերության մեջ (ք. Ռոստով) որպես ածի խթանիչներ, ջրավազանների սանիտարական վիճակը բարելավող, բակտերիոստատիկ և որոշ վնասատու ջրիմուռների աճը կանխող միջոցներ:

Վ. Ս. Նարությունյանը մոտ 25 տարի հանդիսացել է հանրապետական դպրոցական օլիմպիադայի ժյուրիի անդամ, իսկ 1980-1984 թթ.՝ նաև միութենական դպրոցական օլիմպիադայի կազմկոմիտեի և ժյուրիի կազմում: 1982 թ. Ֆրունզե քաղաքում կայացած միութենական օլիմպիադայի աշխատանքներին ակտիվորեն մասնակցություն ցուցաբերելու համար պարգևատրվել է Կիրգիզիայի գիտությունների ակադեմիայի պատվոգրով: Այդ ընթացքում, հանրապետության դպրոցականներին և ուսուցիչներին օգնելու նպատակով, հրապարակել է «Օրգանական քիմիան քիմիական օլիմպիադաներում» ուսումնամեթոդական ձեռնարկը, որն առաջինն էր մեր հանրապետությունում: ԵՊՆ-ի և քիմիայի ֆակուլտետի գիտական, ինչպես նաև ՆՏ ԳԱԱ ՕՔԻ գիտական ասպիրանտներ շնորհող խորհուրդների անդամ էր: 1996 թ. ընտրվել է Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի անդամ, 2003 թ.՝ ՆՏ ակադեմիայի թղթակից անդամ: 1981 և 1984 թթ. պարգևատրվել է «ԽՍՀՄ գյուղատնտեսության կրթական» 1999 թ. ԵՊՆ-ի հիմնադրման 80-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է ՆՏ կրթության և գիտության նախարարության պատվոգրով:

Վաստակաշատ մանկավարժի և գիտնականի, լավ մարդու և սրտացավ ընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում:

*ԵՊՆ Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետ
«Նայաստրանի քիմիական հանդեսի» խմբագրական կոլեգիա*